

## ԲԵՅԼԵՐՅԱՆ ՀՐԱՉՅԱ

\*\*\*

Ի՞նչ զվարթուն էր անբարբառ երգում,  
Ո՞վ էր տեսանել տաճարը բառի:  
Ո՞վ էր ներփակվել բառի ընդերքում,  
Ինչպես Միերը՝ Ագռավաքարի:

Լույսն էր տրոփում երակ առ երակ  
Ու մաքրագործվում թախիժ առ թախիժ,  
Հաղթականար էր հյուսում երփներանգ  
Անձրևի ծառի տերևաթափից:

Լույսն էր ծիլ տալիս ընդերքից բառի,  
Որ անհասանելի եզերքին հասնի,—  
Շունչ էր արարում, որ աչք արարի,  
Աչք էր արարում, որ իրեն տեսնի:

Մեր ցնորքները լույսի մեջ հուսցվում—  
Ցուլցվում էին իրիկնամուտին:  
Զորությունները երկնային ցնցվում —  
Շնորհում էին փառքն առավուտի...

Մեր մարմինները՝ ճառագյալ հողից  
Դեպի աստղերը շքեղահանդես —  
Պիտի նույն հողում անթեղվեն նորից  
Կայծքարի ներսում ննջող կայծի պես:

\*\*\*

Այրում այրվող արյան գերի,  
Եղիր այր մի ետին:  
Հավիր գետնին ու մարգերին,  
Դարձիր մարգագետին:

Անմատույց է բեռն առանց հող.  
Բացիր դռները գոց:  
Հավիր ոսկուն՝ մեղվին օժող  
Ու դարձիր ոսկեգօծ:

Թող վերանա, չքվի, կորչի  
Չանձրույթը անձանձիր  
Հավիր ծաղկին ու բողբոջին,  
Ծաղկաբողբոջ դարձիր:

Հավիր մահին՝ մահիճ լուսնի,  
Դարձիր լուսնամահիկ:

Հավիր–ծուլվիր ցայգալուսի  
Աստեղային պահին:

Մի ընկեցիկ երկինք դարձիր –  
Փշրվող ապակի:  
Ինքդ քո մեջ անդրադարձիր,  
Վերհուշ մոլորակի:

Սահմաններում չսահմանվող  
Կծնվի Բառն էլի:  
Հավիր Բառին չարտասանվող,  
Եղիր անբառելի: